ԳԱՐԵԳԻՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐՔ—ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻ ՄԱՀԸ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Այն թվի փետրվարի 3-ին կնքեց իր մահկանացուն Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոսը ութսունվեցամյա հասակում։ Նորին Սրբության մահվան դույժը, կայծակի արագությամբ, տարածվեց ինչպես Վրաստանում, այնպես և ողջ Սովետական Միության մեջ։ Նույն օրը Նորին Սրբության մահվան մասին կաթողիկոսական տեղապահ ամենապատիվ Մելքիսեդեկ միտրոպոլիտը բարեհաճել էր հեռագրել Ս. Էջմիածին Ամենայն Հայոց Հայրապետին։

Նորին Սրբությունը ծնվել է 1866 թվին։ Նա սովորել և ավարտել է Կիևի Հոգևոր ճեմարանը և ապա 60 տարի շարունակ անբասիր ծառայել հոգևոր ասպարեզում. 40 տարի պաշտոնավարել է որպես քահանա, և 1932-ից մինչև 1952 թվը, մեծ ձեռնհասությամբ, վարել է կաթողիկոսության պատասխանատու պաշտոնը։



Հանգուցյալը մեր Վեհափառ Հայրապե-

տի մտերիմ բարեկամներից էր՝ անչափ սիրված և հարգված նրանից, ուստի և նրա մահը խիստ վշտացրեց ծերունազարդ Վեհին, ինչպես և Մայր Աթոռի ողջ միաբանությանը։ Նախանցյալ տարի Նորին Սրբության Ս. Էջմիածնում եղած ժամանակ Մայր Աթոռի միաբանությունը մոտից ծանոթացել էր նրա բարի և ազնիվ բնավորության հետ, ինչպես և հայ ժողովրդի և հայ եկեղեցու նկատմամբ նրա ունեցած անչափ սիրալիր վերաբերմունքին։

Քույր եկեղեցու ականավոր հովվապետի հիշատակը հարգելու նպատակով, Վեհափառ Հայրապետը հատուկ պատգամավորություն գործուղեց Թբիլիսի։ Պատգամավորության մեջ մտնում էին Մայր Աթոռի Ս. Էջմիածնի միաբան գերաշնորհ տեր Սահակ եպիսկոպոսը, Թբիլիսիի Ս. Գեորգի վանահայր տեր Վարդան վարդապետը և Թբիլիսիի թեմական խորհրդի նախագահ Տիար Աղաջանյանը և մենք։

Գերաշնորհ տեր Սահակ եպիսկոպոսը ճանապարհվեց Երևանից փետրվարի 8-ին։ Ամսի 9-ի առավոտյան ժամը 8-ին պատգամավորությունը ժամանեց Թբիլիսի։

Հայոց Առաջնորդարանում պատգամավորությանը այցելության եկավ Թելավի առաջնորդ գերաշնորհ տեր Գավրիլ եպիսկոպոսը՝ Քավղեթի եկեղեցու միաբան Խարտիոն ավագ քահանայի ուղեկցությամբ։

Գերաշնորհ տեր Սահակ եպիսկոպոսը Վեհափառ Հայրապետի անունից խորին ցավակցություն հայտնեց իր հոգևոր եղբոր՝ հանգուցյալ Կալիստրատ կաթողիկոսի մահվան առթիվ։

Նույն օրը պատգամավորությունը ներկա գտնվեց Թբիլիսիի հայոց Ս. Գեորգ եկեղեցու երեկոյան ժամերգությանը և ապա քահանայական դասի, թեմական խորհրդի անդամների և երգեցիկ խմբի հետ միասին գնաց Ս. Սիոնի մայր տաճարը հոգեհանգիստ կատարելու համար։ Ջնայած տեղացող հորդառատ անձրևին, բոլոր փողոցները լեփ-լեցուն էին հավատացյալ ժողովրդյան հոծ բազմությամբ։ Պատգամավորությունը Հայաստանյայց Եկեղեցու անունից ցավակցություն հայտնելով Պատրիարքի տեղակալ ամենապատիվ տեր Մելքիսեդեկ միտրոպոլիտին Կալիստրատ կաթողիկոսի մահվան առթիվ, ըստ արժանվույն նշանակված տեղը։ Երեկոյան ժամը 6-ին հանգուցյալ Պատրիարքի դագաղի մոտ Հայոց Եկեղեցու պատգամավորությունը կատարեց հոգեհանգիստ՝ քառաձայն երգեցիկ խմբի մասնակցությամբ։

Հաջորդ օրը, փետրվարի 10-ին, պատգամավորությունը ներկա գտնվեց Ս. Գեորգ եկեղեցում կիրակնօրյա Պատարագին։ Ս. Պատարագից հետո, հանդիսադրությամբ տեր Սահակ եպիսկոպոսի, կատարվեց հոգեհանգիստ քույր եկեղեցու հովվապետի։ Այստեղից հայոց եկեղեցու պատգամավորությունը, Թբիլիսիի հայոց թեմի խորհրդի անդամների հետ միասին, շարժվեց դեպի Սիոնի Մայր տաճարը։

Բոլոր փողոցները դեպի մայր եկեղեցին լիքն էին հավատացյալների անհամար բազմությամբ։ Անվերջ լսվում էր եկեղեցու զանգերի զողանջյունը. քույր եկեղեցին ողբում էր իր սիրելի հովվապետի կորուստը։ Ներս մտնելով տաճար, մեր պատգամավորությունը գրավեց իրեն հատկացված տեղերը։ Շարունակվում էր Ս. Պատարագի արարողությունը։ Պատարագիչն էր հանգուցյալ Պատրիարքի տեղակալ ամենապատիվ տեր Մելքիսեդեկ միտրոպոլիտը։ Պատարագին ներկա էր Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Պատրիարքի պատգամավորությունը ամենապատիվ Նիկոլայ Կրուտիցկի միտրոպոլիտի գլխավորությամբ։ Պատգամավորության կազմում էին գտնվում Սիմֆերոպոլի Արքեպիսկոպոս Լուկան, Խարկովի Արքեպիսկոպոս Ստեֆանը և ուրիշները։ Ներկա էր նաև Դամասկոսի պատրիարքության ներկայացուցիչ Վասիլի վարդապետը, ինչպես և վրաց եկեղեցու բազմաթիվ վարդապետներ, քահանաներ, սարկավագներ և դպիրներ, որոնք բոլորն զգեստավորված մասնակցում էին պատարագին։ Պատարագն ավարտվելուց հետո, սկսվեց հանգուցյալ Պատրիարքի թաղման արարողությունը։

Դագաղի վրա, ամենապատիվ միտրոպոլիտ Նիկոլայ Կրուտիցկին արտասանեց վերին աստիճանի ազդու և բովանդակալից մի դամբանական, որը ուժեղ տպավորություն թողեց հավատացյալների վրա։ Շատերն արտասվեցին։ Ապա Ամենայն Հայոց Հայրապետի անունից ցավակցության խոսք ասաց գերաշնորհ տեր Սահակ եպիսկոպոսը։

Սկսվեց թաղման արարողությունը։ Հանգուցյալ պատրիարքին վերջին հրաժեշտը տալու համար հրավիրվեցին նախ նրա հարազատները և ազգականները, ապա Ռուս եկեղեցու և քույր մյուս եկեղեցիների պատգամավորները։ Եկեղեցականներից միտրոպոլիտ ամենապատիվ Նիկոլայ Կրուտիցկին առաջինը ծունկ չոքեց հանգուցյալ Պատրիարքի դագաղի առաջ, համբուրեց հանգուցյալի աջն ու ճակատը և աղոթեց։ Նույն ձևով հերթականությամբ մոտեցան մյուս եկեղեցիների ներկայացուցիչները։ Ցավակցական վերջին խոսքն ասաց երիտասարդ Վասիլիյ վարդապետը։ Այնուհետև կար-

դացվեցին արտասահմանից, Սովետական Միության զանազան քաղաքներից ստացված ցավակցական հեռագրերը, որոնց մեջ էին Ամենայն Հայոց Հայրապետի և Թբիլիսիի Հայոց թեմական խորհրդի հեռագրերը։

Ժամը 5-ին հանգուցյալ Պատրիարքի դագաղը տաճարից դուրս բերվեց, ըստ սովորության պտտեցվեց տաճարի շուրջը, և ապա ներս բերվեց տաճար ուր փորված էր հանգուցյալի գերեզմանը։ Սահմանված աղոթքները կատարելուց հետո, հանգուցյալի դագաղը իջեցվեց գերեզման և ծածկվեց հողով։ Տեսարանը շատ հուզիչ էր։ Խորը վշտով էին համակված բոլորը, չկար այլևս բոլորից սիրված կաթողիկոսը։

Ժամը 6-ին, ինչպես բոլոր պատգամավորները, այնպես և Հայոց Եկեղեցու պատգամավորությունը հրավիրվեց նորակառույց Վեհարանը ճաշի։

Ճաշկերույթի ընթացքում ցավակցական խոսքեր ասացին ամենապատիվ Նիկոլայ Կրուտիցկին, Սիմֆերոպոլի Արքեպիսկոպոս Լուկան և գերաշնորհ տեր Սահակ եպիսկոպոսը։ Ճաշկերույթից հետո մեր պատգամավորությունը հրաժեշտ տվեց հանգուցյալ Պատրիարքի հարազատներին, Մելքիսեդեկ միտրոպոլիտին և մյուս բարձրաստիճան հոգևորականներին՝ կրկին անգամ հայտնելով իր ցավակցությունը։

Ամենապատիվ տեր Մելքիսեդեկ միտրոպոլիտը խնդրեց տեր Սահակ եպիսկոպոսից՝ Վեհափառ Հայրապետ Գեորգ Զ. ին հաղորդել իր անկեղծ շնորհակալությունը՝ ցույց տված վշտակցության և մատուցած հարգանքի համար՝ հանդեպ հանգուցյալ Կաթողիկոս-Պատրիարքի հիշատակը։ Մեր պատգամավորությունն իր ստանձնած պարտականությունը կատարելուց հետո, ամսույս 12-ին մեկնեց Թբիլիսիից դեպի Մայր Աթոռ։

Թող տերը լուսավորե Նորին Սրբություն՝ հանգուցյալ Կալիստրատ Պատրիարքի հոգին և արժանավոր գահակալով վերացնի մեր քույր եկեղեցու կաթողիկոսական գահի սև քողը։